

թիւնն Ենք հրաւիրում Ապրաւատականի հայութեան կըթական գործի և զբա համար եռանդուն կերպով աշխատող Հայուհեաց Միացեալ Բարեգործական Ընկերութեան վրայ, որին ցանկանում Ենք կատարեալ յաջողութեան:

## ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

### ՊՐԵՒԽՈՍԼԱԻ ԵԿԵՂԵՑԻ

Խուսաց սրբազան Սինօդի որոշումը.

Ըստ հրամանի նորին Կայսերական Մեծութեան կառավարիչ սրբազան Սինօդը դիտողութեան առաւ սուրբ պատարագի ժամանակ կարգացուող քարոզը: Հրամայեցին ի նկատի առնելով եղած դիտադրութիւնները, սրբազան Սինօդը որոշում է վերականգնել պատարագի ժամանակ 1881 թուի մայիսի 8-ի հրամանով որոշուած քարոզի ընթերցանութիւնը, որի բովանդակութիւնը հետեւեալն է.—

«Վասն ներելոյ մեզ զյանցանս և զանօրէնութիւնո մեր և ջնջելոյ ի մէնջ զիսովութիւնո թշնամեաց զջէր աղաչեսցուք»:

«Վասն հաստատութեան յերկրի մերում անդորրութեան, խաղաղութեան և բարեպաշտութեան զջէր աղաչեսցուք»:

Քարոզի յիշեալ հատուածների ընթերցանութիւնը պատարագի ժամանակ Սինօդը մտցրել է պրաւօնուաւ ոռուսաց եկեղեցիներում վերջերս տեղի ունեցած ներքին խռովութիւնների պատճառով:

Թէ որքան անձիշտ տեղեկութիւններ են տալիս արտասահմանեան թերթերը ուսւսաստանի ներքին գործերի մասին, այդ երևաց վերջերս հազորգած տեղեկութիւններից, որոնց մէջ յիշուած էր, որ Պետերբուրգի բանուորական շարժման գլուխ էին անցել կրօնշտառդի Տէր Յովհաննէսը և Տէր Գէորգ Գալոնը. մինչգեռ լինչպէս ընթերցողները գիտեն, հայր Խօսն կրօնշտառդոկին մի խաղաղատէր կրօնաւոր է և միայն աղօթել զիտէ հեռաւոր վայրերից գիտողների և իրեն շուրջը կրօնշտառդ հաւաքուողների

համար։ Նա Խուսանտանի ըոլոր ծայրերից ստանում է խնդիրներ և ժամոցներ աղօթելու և պատարագ մատուցանելու համար օգնում է ազքատաներին և հէնց բանուորական շարժումների ժամանակ ծառայում էր անկողնին, մինչդեռ Տէր Գէորգ Գալօնի մասին լրագիրները տալիս են հետեւալ կենսագրական ուղեկութիւններ։

Տէր Գէորգ Գալօնը Պոլտաւցի մի գիւղացու որդի է, մանկական հասակում նա սագարած և խողարած էր։ Գիւղական ուսումնարանում եղած ժամանակ նկատեցին նրա մեծ ընդունակութիւնը և հօրը հասկացրին, որ նրան Պալտաւայի գպրանոցն ուղարկեր։ Գալօնը մանկութիւնից արդէն լաւ էր ճանաչում աշխատաւոր ժողովրդի վիճակը և այդ պատճառով էլ արձակուեց գպրոցից քաղաքական ընաւորութիւն կըող պրօպագանգայի պատճառով։ Փոքր ինչ յետոյ նորից ընդունեցին նրան գպրոց և նա աւարտեց գասընթացը, բայց վարքից նշանակեցին Յ թուանշանը։ Այդպիսի թուանշանով նա շէր կարող շարունակել ուսումը ըարձրագոյն գպրոցում։ Եռանդով լի Գալօնը մի առ ժամանակ պարապ մնաց, սակայն ծանօթները շուտով գործ գտան նրա համար զեմստվային վարչութեան մէջ և գարձաւ վիճակագիր։ Նա գեռ ըոլորովին երիտասարդ էր, երբ որ ծանօթացաւ Տօլստոյին հետեւող Ֆէյերմանի հետ, որը մեծ ազդեցութիւն ունեցաւ նրա վրայ։ ահա այստեղ Գալօնը վճռեց կռուել ժողովրդի նիւթական բարեկեցութեան և նրա իրաւունքների պաշապանութեան համար։

Նրա անբասիր պաշտօնավարութիւնը վիճակադրական բաժնում վստահութիւն առաջ բերեց գէպի նա։ Այս պաշտօնավարութեան միջոցին նա հանդիպեց մի երիտասարդ աղջկայ, որ իւր ամբողջ կեանքը նուիրել էր ժողովրդին ծառայելու գործին։ Նա հաւատացրեց Գալօնին, որ քահանայի վերաբերեամբ տակ առաւել լաւ կարելի է ծառայել, քան պաշտօնէի համազգեստով կամ իրաւաբանի ֆրակով։ ուուս գիւղացին գեռ քահանայի վերաբերեամբ առաւել մեծ վստահութեամբ է նայում։

Գալօնը գնաց Պետերբուրգ և ցանկացաւ հոգեռոր ճեմարան մաներներ։ Սրբազն Սինոգի գիտական կոմիտեալ ուղղեց նրա վարքի թուանշանը որոշ միջնորդութեանց շնորհիւ։

Մայրաքաղաքում գաւառացի երիտասարդը ազահութեամբ յարձակուեց գիտութեան աղքիւրի վրայ, ուսումնասիրեց մայրաքաղաքի կեանքը, մտաւ գործարանները։ Զորս տարի մնաց Գալօնը ճեմարանում և համոզուեց, որ գիտութեան և կարծիքի ազատութիւնը ճեմարանի համար արգելուած պտուղ է... Ճիքի ազատութիւնը ճեմարանի համար արգելուած պտուղ է...

բայց վկայական ստանալ պէտք էր և ահա նա սրանից եօթ տարի առաջ մեծ գժուարութեամբ աւարտեց ճեմարանը:

Պետերուրդի մետրօպօլիտի միջնորդութեամբ Գալոնը նշանակուեց բանտի քահանայ: Այսօր նա 35 տարեկան է: Պեռ մկրեց էլ հայր Գալոնը շատ էր հետաքրքրում բանուորների կեանքով և այդ պատճառով մեծ եռանդով սկսեց ուսումնասիրել նըանց վիճակը գլխաւորապէս Պուտիլովի գործարանում: Նա այցելում էր բանուորների բնակարանները և որչափ ոյժ ունէր, օգնում էր նըանց նեղութեան ժամանակ: Ամենամեծ ու շագրութիւնը նա գարձնում էր բանուորների զաւակներին և ծնողներին հառկացնում էր, որ իրենց զաւակներին անպատճառ գպրց ուղարկէին:

Գալոնը, եթիւ տեսնում էր ապօրինի վարժունքը բանուորների հետ, միշտ միջնորդ և պաշլան էր հանդիսանում գործարանական վարչութեան և նոյն իսկ քաղաքապետի առաջ: Գալոնի մատ բանուորները հաւաքւում էն ոչ թէ միայն գործարանի խնդիրներով, այլ և իրենց մասնաւոր անհամաձայնութիւններն ու վէճերը լուծելու համար: Առանձին մեծ եռանդով էր կռւում հայր Գալոնը հարթեցութեան զէմ: բանուորներին ընթերցանութեան էր վարժեցնում, սովորեցնում էր նըանց հաւաքաւել միասին և ունենալ ընկերական զբոցներ խորհուրդներ: Սովորաբար հայր Գալոնը լուռ և տոք բնաւորութեան տէր մարդ է, բայց միևնույն ժամանակ ճարատասան քարոզիչ է և բազմակողմանի լուսաւորուած մի անձնաւորութիւն:

Այս տասուայ յունվարի 9-ին Պետերպում կատարուած գէպքերի առթիւ «Церк. Вѣстникъ»-ի № 2-ում կարգում ենք Սերգիի եպիսկոպոսի հետեւալ սրտառուչ առաջնորդողը:

Անիծեալ լիցի օրն այն եւ գիշերն, եւ տարցի զնա խաւար, մի եղիցի յաւուրա տարւոյ եւ մի թուեցի յաւուրա ամսոց,

Յոր. Գլ. 3-6.

Ո՞ւշափի կը ցանկայի կրկնել այդ խոցուած հոգու ազազակը գժեազդ յունվար 9-ի առթիւ: Ո՞հ, երանի թէ չը լինէր այդ օրը մեր պատմութեան մէջ: Մի քանի հազար հոգուց բազկացած բանուորների խմբեր՝ (առում են, որ գործադոււ են արեւ 140,000 հոգի) իրենց կանանց և երեխաների հետ թափօրով գիմել են զէպի պալատ՝ թագաւորին, ինչպէս իրենք են առում:

լոկ զինւորները դիմաւորել են հրացանների որոտով։ Մայրաւագաքի փողոցներու մ սկսուեց եղբայրասպան կռիւը և թափուեց մեզաւորների և անմեղների արիւնը։ Սպանուած են (ըստ պետական հաղորդագրութեան յունվարի 11 ից) 96 հոգի և վիրաւորուած 333, չը հաշուելով ի հարկ է այն բազմաթիւ անձանց, որոնք ցուցակագրուած չեն։ Պատմածներին նայելով, սպանուածների մէջ կան նաև կանայք և երեխաններ, կան հասարակ հանգիսատեսներ, որոնք ըուլորովին պատմահաբար են ընկել գնդակի հանգէսլ . . . Ըղբում է այժմո մեր մայրաքաղաքը, ինչպէս հնում չուպելը «իւր զաւակների համար և չի ուղում մխիթարուել, որովհեաւ նրանք չը կան այլ ես։ (Երեմ. Գլ.՝ 31—15) Եւ ոչ ոքի չի կարելի մեղադրել նրանց թափած արեան համար . . . Արդեօք մեղաւո՞ր է դիւրահաւատ ժողովուրդը, որի կեանքում միշտ կան բազմաթիւ պակասութիւններ, զրկանքներ և վիրաւորանքներ և որը միշտ կարիք ունի ողորմութիւն և պաշտպանութիւն խնդրելու։ միթէ նա մեղաւոր է, որ այս անգամ էլ ժողովուեց և գնաց իւր կարիքների համար խնդրելու։ Բայց չէ որ նյանք տառմ էին դնանք թագաւորի մօտ, ինչպէս զաւակներ իրենց հօր մօտ, պատմենք նրան մեր կարիքները, օգնութիւն և արդարութիւն վինտուենք։ Խոկ—ո՞ր ոռւս մարդու սիրան արձադանք չի տալ այդ կոչին։ Ո՞ր ոռւս մարդու ոգին չի ցնցուիլ այդ որաւաշարժ տեսաբանից։ Ֆողովուրդը մեզաւոր չէ, որ նրա ինքնակալ վարիչներն այդ խնդրի տակ ծածկում էին իրենց միտումները։ Միւս կողմից էլ միթէ մեզաւոր են կարդ պաշտպանողները, որ նրանց՝ թագաւոր մեղաւորի գնդերին, որոնք զարդարուած են անցեալ որական այդ ընտիր գնդերին, որոնք զարդարուած են անցեալ պատերազմների գաֆնիներով, վիճակուեց անգէն ժողովուդի պատերազմների գաֆնիներով, անմեղ մարդկանց արիւնով հայրենի վրայ հրացան պարպելու և անմեղ մարդկանց արիւնով հայրենի երկիրը ներկելու տխուր գերը։ Նրանք ուրիշ ելք այլ ես չեն երկիրը ներկելու տխուր գերը։ Նրանք ուրիշ ելք այլ ես չեն երկիրը ներկելու տխուր գերը։ Կառապահ գնով նրանք աւելի մեծ և վատ տեսնում և գուցէ այդ սոսկալի գնով նրանք աւելի մեծ և վատ տեսնում և գուցէ այդ սոսկալի գնով նրանք աւելի մեծ և վատ միործանքի առաջն առան։ Ոչ ոքին պէտք չէ այդ արիւնը, միմիործանքի առաջն առան։ Ոչ ոքին պէտք չէ այդ արիւնը թաշանակ, որ նա թափուէր։ Բայց և այնպէս այդ արիւնը թաշանակ, որ նա թափուէր։ Ասուկալի բան իւր ճակատագրական անխուսափելիութեամբ։ և սոսկալի բան իւր ճակատագրական անխուսափելիութեամբ։ մի խօսքով Աստուածային պատուհաս եկաւ մեր գլախին, որպէս զի արտաքին պատերազմի գժբազդութեանց և անյաջողութիւնների վրայ աւելացնէր և այդ արիւնաներկ բիծը . . .

«Տէր, փրկեր Արքային, փրկեր Ռուսիան, մի զայրանար մեր չարեաց վրայ և մի ցիշեր մեր անիրաւութիւնները։»

Ա. Պետերբուրգի Կաղանի տաճարում դեկտեմբերի 26-ին կատարուել է հոգեհանդիսաց Պօրտ Արտուրում ընկածների համար, որի ժամանակ Նարվայի եպիսկոպոս Անտոնինը արտասահնել է հետևեալ որտառուչ գամբանականը:

«Այս ժամին ես լուսմ եմ Երեմիա մարգարեի վշաալի ձայնը. «Ո՞ աայր զգութաս իմ ջուր, և զաւս իմ աղքեւրո արտառուաց. և լայի զժողովուրզո զայս զտիւ և զգեցեր և զմիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ» (Երեմիա Գլ. 9-1) Մեր ամրոցը խորտակուած է, քաղաքն ամայացած և նրա շենքերն աւեր գարձած: Ժայռերի ըեկարների մէջ և ծովի խորքերում թաղուած են մեր հարիւրաւոր եղբայրներ: Տօնական աստղը մեզ համար ծագեց ոչ թէ ուրախութեան փայլով, այլ սարսեցնող վշտերի միջից: Դեռ ես մխում են ոչնչացրած քաղաքի մնացորդները, իսկ նրա նոկէ ուրը, որտեղ փողփողում էր մեր խաչի գրօշակը, այսուհետեւ այն յուշարձանն է, որի վրայ Առտուծոյ բազուկը գրեց մի քանիսի մեղքերը և միւսների նահատակութիւնը: Մեր հայրերն ու եղբայրները, քաջ ուազմեկները և հայրենիքի պանծալի հերոսները համարեա մի ամբողջ տարե դիմացան թշնամու հարուածներին, ցերեկ և գիշեր հանգստութիւն չունեցան իրենց ուազմական գերմարդկային ջանքերի ժամանակ, սովի, զրկանքի, հիւանդութիւնների և սարսափերի ուժասագառ վիճակում: Առիւծների նման յարձակում էին նրանք թշնամու դէմ, բայց թոյլ էին նրանց ատամներն ու չանկերը պաշտպանուելու համար և նրանք նմանուել են ի սպանդ վարեալ ոչխարներին: Այսպիսով մենք ձմեռը ժողովեցինք այն, ինչ որ ցանուած էր ամառը: Ամբողջ աշխարհի առաջ մենք յայտնուեցանք մեր գործերով: Անտեսանելի աջի հարուածը անգառնալի վրէժինդիր է լինում: Յիսուն տարի առաջ Առտուծոյ պատուհանը հարուածեց մեզ ծովից, որ կակզէին մեր սրտերը և երկիրը թօժափէր մարմնաւոր սարկութեան շղթաները: Այժմս էլ ծովի կողմից եկաւ Առտուծոյ զայրոյթը, որպէս զի ցըուի այգ հին օրերի մնացորդը՝ հոգւոյ ստրկացումը: Մեր եղբայրների, հայրենիքի համար անտրտունջ տանջուածների արիւնով յագեցաւ երկիրը և ներկուեց ծովը, իսկ երկինքը ծածկուեց մեր անպատճութեան խանձարուրով:

Տէր, ընդունիր այսքան տանջանաց գինը և մեզանից պահնջուած կեանքերը մնացածների կենաց թեթևութեան համար: Թող զժբաղդութեանց փոթորիկը փոխուի մխիթարութեան հովի:

Մեզ ըոլորիս համար լաւագոյն օրերի յուսով թող ամրաւանան կռուողների ոյժերը և պայծառանան մեռնողների յոյ-

սերը։ Իսկ պատերազմի գաշտում թշնամու որով խոցուածների համար մնաք ազօթում ենք։ Թող արդարութեամբ կանգնեն նրանք Քո առաջ իրենց խմբով մեր հոգիների փրկութեան համար՝ ողորմութեամբ քանալու մեր երկրային վիճակը դեռող աչքերը։

### Մի՞քի Ասուած մեզ նետ է։

Պետերքուրդի հոգեսը ճեմարանի եկեղեցում Սերգիի և պիուկոպսի արտասոնած քարոզը։

Այս վերնագրի տակ Պերք ՎԵՇՆԻԿԵ-ում տպուած է մի իմաստալից և ճշմարտութեամբ լի քարոզ, որ թէև երկար, սակայն կարեւոր համարեցինք առաջ ըերեւ, որավհեաւ այնտեղ շօշափուծ է և մեր ժողովրդի վիճակը։

«Աստուած մեզ հետ է։ գիտառջիք հեթանոսք և պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է։» Ահա բառեր, որոնք առանձին շեշտով մի քանի անդամ արտասանուեցին ներկայ ժամասացութեան մէջոցին։ . . . Ո՞ւպիսի մեծ միտք և ոյժ կայ, որպիսի անպարտելի հաւատ կայ գէպի ուշիւական գործերի արդարութիւնը, որքան մեծ յոյս կայ, որ նա կը յաղթանակի երեն արգելք հանդիսացողների գէմ։ Եւ մենք ո՞ւշափ սիրում էինք արտասանել այդ խօսքերը, ո՞ւշափ սիրում էինք այդ բառերի գործադրութիւնը մեր հայրենիքի կեանքի եւրաքանչիւր հանգամանքին։ Մենք նրանց մէջ աեսնում էինք մեր անցեալ պատմութեան մեկնութիւնը և ապագայում մեր անպարտելիւթեան գրաւականը, մենք այդ խօսքերը մեր ժողովրդական կեանքի բնաբան էինք համարում։ Ուպիսի բերկրալի և հպարտ վսահութեամբ էինք գրում այդ բառերը մեր պետական գրօշակի վրայ և համարձակ գուրս գալիս նրա հովանու տակ մեր երկրային գործունէութեան համար, սպասելով և յուստով, որ մեր առաջ ամբողջ աշխարհը դլուխ կը խսնարհեցնի և կը հպատակուի և ոյժի և իշխանութեան։

Ծանր է յիշել այդ բոլորը, նոյն իսկ ցաւալի է լսել այժմա այդ խօսքերը, երբ մեր հայրենիքին վիճակուեց մեծ փորձութիւն, երբ իրար ետեկից անդիմադրելի կերպով խորտակուում են մեր ժողովրդի ամենալաւ իղձերը, երբ առաջներս ոչ մի յուսոյ նշոյլ չկայ. երբ մեր ազգի ընտելագոյն զաւակները կոտորւում են հեռու՝ օտար երկրում և մնաք այդ կործանման մէջոցին միսիթարական բան չունինք։ Ցանկանում ես սպառերդուի հետ գուշել։ «Ուր են ողորմութիւնք Քո Տէր առաջինք։

(Սակա՞ 88—50)։ Յայց արդ մեջիցեցեր և տնարդեցեր զմեզ և ոչ ելեք Աստուած ընդ զօրս մեր, (Սազ. 43—10). գէպի յաղթութիւն չես առաջնորդում մեր զօրքերին։ Ակամայից վրդովւում է մեր սիրալը և ամենատանջող կասկածներ են մուտք գործում այնաեղ։ Արգեօք Աստուած բոլորավին չի մռացնել և թողել մեր հայրենիքը։ Կամ գուցէ մեր ժողովրդական բոլոր յոյսերը գատարել ցնորք էին, մի միայն մոլորութիւն, որոնք շոյում էին մեր մեծամասութիւնն ու անձնավոտահութիւնը։

Սակայն եղբարք աշխատենք ըմբռնել «Ընդ մեզ է Աստուած, գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է» Նշանաւոր խօսքերը։ Միթէ նրանց մէջ աշխարհային զօրութեան մասին է խօսւում, միթէ զէնքով և ոյժով աշխարհ նուաճելու մասին է խօսքը, թէ այլ թագաւորութեան—ճշմարտութեան և արդարութեան թագաւորութեան մասին է, որն իրեն համար աշխարհային տիրապետութիւն չի սրոնաւմ երկրիս վրայ, ոչ որի զէնքով չի սպառնում, որը բոլորովին նման չէ աշխարհային իշխանութեան և նոյն իսկ հակառակ է նրան։ Չուր չէ, որ մենք ներկայ տօնի ժամանակ զարմանում ենք զարմանալի հակադրութիւններով։—Երկինք և այր, մոռը և անպարագը ելի Աստուած։ «Հրէից թագաւոր Յիսուսը» դուիս է, երկրի համար նոր կեանք է բացւում, հիմք է զրւում յաւիտենական թագաւորութեանը կամ բոլորովին չի նկատում այդ գալուստը և օտար է մնում նրան (որպէս հռովմայեցիք), կամ ուղղակի զինուում է նրա զէմ և որոնում է նորածնին—սպանելու համար։ Եւ աշխարհի բոլոր մարդկանցից, բոլոր հզօր իշխաններից, ըոլոր հարուստ, նշանաւոր և զիտուն մարդկանցից մի միայն խզմուկ և պարզամիտ հովիւներն են արժանանուում և պատրաստ գտնուում հանգիպելու մերձեցող թագաւորութեան և փառաբանել այն հրեշտակների հետ՝ յաղթական օքներգութեամբ։ Հետեւապէս Քրիստոսը ոչ աշխարհին տիրելու համար էր եկել և ոչ էլ հեթանոսներին այդ ձևով նուաճելու համար է կոչում մեզ։

—Այնուհետև որբազանը բացատրում է, որ քրիստոնէական կեանքը մեզ պէտք է պատրաստի երկնաւոր կեանքի համար։ Նա ազատ պէտք է լինի հպարտութիւնից, կրքերից, ագահութիւնից և ինքնասիրութիւնից և լի պէտք է լինի խօսարհութեամբ, ամենայն մաքրութեամբ, անձնազոհութեամբ և ամեն անսակ բարի գործերով։

—Այժմո, յեշեալ պարբերութեան բուն միքտը բացատրելուց յետոյ, դիմենք մեր խզմին և հարցնենք նրան մեր մասին, գուցէ.

նա մեղ ցոյց կը տայ շատ քան, որոնք մեզ իրաւունք չեն տալ դոչելու Աստուած ընդ մեզ է» մեծ խօսքը: Առ այլ ևս չեմ խօսում մեր անձնական կեանքում՝ Քրիստոսի օրէնքը մոռանալու մասին։ չեմ խօսում, որ մեր հասարակական կեանքը կազմակերպւում և ընթանում է եկեղեցական-քրիստոնէական կեանքի հակառակի: Ու շաղբութիւն դասձնենք մեր ժողովրդակական և պետական կեանքին, որոնց վերաբերութեամբ մենք սիրում էինք կը կնել— «Աստուած ընդ մեզ է», և որի մէջ առանձին պայցառութեամբ պէտք է արտափայլի մեր համաշխարհային կոչումը՝ որպէս ժողովրդի: Գուցէ մեր խիզն էլ կը բանայ մեր առաջ, որ մենք այստեղ էլ շեղուել ենք ճշմարիտ կեանքից և Աստուած մոռացել: Կարող է պատահել, որ մենք կը տեսնենք՝ թէ ինչպէս մենք էլ ուրիշ անհաւատների նման գրել ենք ուկի հորթն ու ամբողջ ժողովրդով ու պետութեամբ նրան ենք ծառայում և առաջնորդութեամբ միայն և ուրիշ ժողովրդների համեմատութեամբ առանց որոշ ծառայութեան է ընդունուած ճշմարիտ եկեղեցու դաւիթը և որ այդ ողորմութիւնը մեզ նրա համար չի տուած, որ մենք շիմանանք թէ ինչու համար պէտք է մեր ժողովրդի առաջ բացուած լինի համաշխարհային տիրապետութեան ճանապարհը մի միայն հարստանալու և մեր ազգային ինքնասիրութեանը բաւականութիւն տալու: Մենք կարծեն ոկում ենք մառանալ կամ ուղակի հրաժարուիլ, որ մեր պետական գոյութեան նպատակն ու միտքը նրանումն է կայանում, որ հեթանոսներին լոյտ լինինք, կրենք քրիստոնէական ճշմարտութիւնը, քրիստոնէական կեանքի և նրա թագաւորութեան ներկայացուցիչ լինինք: Այդ նպատակի փոխարէն մենք դնում ենք աւելի ստոր մի նպատակ՝—մեր երկրային քարեկեցութիւնը՝ որպէս ժողովրդի, և զրա համար պատրաստ ենք հրաժարուել դիտակցարար այն բանից, ինչը որ հրամայում է մեր բարձրադիյն, երկնային կոչումը: Օրինակի համար յիշենք այն, որ քանի աարի առաջ համարեա մեր երկրի սահմաններում անգութ կերպով կոտորւած էր անհաւատ մահմէկականներից մի քրիստոնեայ ժողովուրդ: Թշուառների հեծեծանքը համսում էր մեզ, մենք կարող էինք օգնել նրանց, որովհետեւ զրա համար ոյժ և միջոցներ ունեինք: Բայց մենք խփեցինք աչքերը, ծածկեցինք մեր ականջները այդ հեծեծանքի դէմ։ առացինք, որ մենք տանն էլ շատ կարիքներ ունինք և որ այդ միջոցները մեզ էլ պէտք կը դան: Դրանից յետոյ քրիստոնեայ հաւատակից փոքրիկ ժողովուրդը զէնք վերցրեց ազարացւոց ատելի լծի դէմ

և մեղանից օդնութիւն էր աղերսում՝ ուժասպառ լինելով անհաւասար կռուի մէջ։ Իսկ մենք հին եղովմացւոց նման միայն ծիծաղեցինք և ծաղրեցինք նրա անյաջողութիւնները և կեղծաւորաբ խնայելով մեր զօրաց արիւնը, դարձեալ խնայեցինք մեր ոյժերն ու միջոցները մեր եղբայրներին օդնելու համար։ Եւ ահա այդ բոլոր ամբարած միջոցները, որ մենք այնպիսի ժամանութեամբ պահում էինք մեզ համար, այժմո ամբողջովին ծախուռում են միանգամայն անսպառելի և չը ցանկացած պատերազմի վրայ, որի միակ նպատակն է պաշտպանել այն, ինչով որ մենք մեզ հարստացնելու յօյս ունենք։ Եւ ահա մեր հայրենիքի ընտրելագոյն դաւակների արիւնը, որ մենք այնքան խնայում եւ պահպանում էինք, այժմո թափուռմ է ահադին գետերով մի երկրում, որը մեզ ծանօթ չէ, թափուռմ է անպտուզ և անօգուտ, որովհետեւ գեռ պսակուած չէ յաղթանակով և ոչ ոք չը գիտէ, արդեօք գէթ ապագայում պէտք է կարողանայ յաղթանակով պսակուել։ Մենք հպարտութեամբ յայտարարում էինք բոլորին, որ Աստուած մեզ հետ է, իսկ լինքներս Աստուծուն մօտ լինելու մասին չէինք մտածում, չէինք մտածում նրա համար ապրելու մասին, այդ պատճառով էլ նա ծածկուեց մեղանից և մեզ ուղարկում է խոկապէս սարսափելի փորձութիւններ։ ուստի և խորտակում է մեր բոլոր յոյսները խոնարհեցնում ամենաանագորոյն կերպով մեր ազդային հպարտութիւնը։

Բայց ո՞վ եղբարք, այս հանդիսաւոր օրը, երբ յեշւում են Աստուծոյ անքննելի բարութիւնները գէպի մարդեկ և մասնաւորապէս յեշւում է Ուռսաստանի վթկութիւնը իւր բազմաթիւ թշնամիներից, չը յուսահատուենք։ Մենք գեռ կարող ենք ազօթել և կ'ազօթենք, որ մեզ ուղարկուած փորձութեան տարին մեր թանկադին հայրենիքի վերջնական խորտակման սկզբը չէինք, չէինք մեր ժողովրդական կեանքի մնանկութեան չարագուշակ յայտարարը, այլ միայն Աստուծոյ արդարութեան այցելութիւն, որը մեզ գէպի քաւութիւն առաջնորդի։ Անասելի ծանրէ այն հարուածներ կը ելը, որոնք այդպէս հետեւզարար պայթում են մեր հայրենիքի գլխին։ գոնէ այդ հարուածները ապարդեւն չը լինին։ Ազօթենք, որ գոնէ այդ տանջանքի շաւղով մենք գիտակցենք մեր ամբողջ ժողովսկով գործած յետագիմութիւնը, որ բացուին մեր հոգենոր աչքերը և տեսնել կարողանանք, թէ ինչ պէտք է լինի մեր պետական գոյութեան նպատակը և լուսումն է մեր ժողովրդական բարգաւաճման և բարեկեցութեան առհաւատչեան։ որ մենք զարթնենք վերջա-

պէս պետական խորտակման տանող սոսկալի քնից։ Զգաստա-  
նալով և ապաշխարելով, նորից քթիստոնէական կեանքին գառ-  
նալով, նորից կը ելով նրան մեր հոգու մէջ, մէնք արդէն իրօք  
կը կարողանանք առել։ «մեզ հետ է Աստուած»։ Բայց այդ նշա-  
նաւոր ու միսիթարական խօսքերը այնպէս չենք ասիլ, ինչպէս  
առաջ էինք ասում։ ոչ թէ հպարտութեամբ և անմիտ անձ-  
նագոլութեամբ ուրիշ ազգերի առաջ և ոչ էլ թեթևամորէն՝  
յուսալով համաշխարհային տիրապետութեան վրայ։ այլ կրտս-  
նոեմութիւնից և կորուսաներից յետոյ՝ մենք կասենք Աստուած  
մեզ հետ է։ խոնարհեցրած գլուխ, հեղ և մեր անարժանու-  
թիւնը հառկանալով, զգալով Աստուածոյ առաջ պատասխան  
չունենալիներս, կ'առենք մի միայն նրա համար, որ արտայալաել  
կարողանանք մեր ուրախ համոզմունքը, որ ինչքան էլ երկրիս  
վրայ յաղթանակի մոլորութիւնը, ինչ շահ էլ խոստանալիս լինի  
աշխարհի սկզբունքներին հետևելը, մենք չենք գնայ այդ զրօ-  
շակի ետևից, որովհետև վերջնական յաղթանակը, յաւիտենա-  
կան յաղթութիւնը պատկանում է Աստուածային թագաւորու-  
թեան և քրիստոնէական ճշմարտութեան, որին Աստուածային  
ողորմութեամբ մենք էլ հաւատում ենք և մեր ոյժերի ներածին  
չափով աշխատում ենք ապրել։»

— Յաշտլի խօսքեր և մարդարատաշար մտքեր։ Ուր էր, թէ  
այդպէս մտածէին և ապօէին մեր վարիչները և իրենց մեքե-  
նայութեանց վրայ յուս դրած, գժւադդութիւն չը պատրաստէին  
ամբողջ ժողովրդի համար։

## ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ֆրանոիսական նախարար Կոմքը պալատում խօսած  
ժամանակ եկեղեցին պետութիւնից բաժանելու պատճառ էր  
համարում այն հանգամանքը, որ Պապն ու Եպիսկոպոսները  
սիստեմատիքաբար միշտ խախտել են կոնկրետատը։ Այդ մեղա-  
դրանքը Պապի կողմից անպատասխան չըմնաց։ Գաղտնի Կոն-  
սիստորիայում նոյեմբերի 14-ին Պիոս X Պապը նախ քան ըն-  
թացիկ ինդիքներին անցնելը, նոր սրբերն յայտարարելն ու նոր  
Եպիսկոպոսներ նշանակելը՝ իւր կարդինալներին ուղղած ճառով  
կամքաւ կանգ առնել Ֆրանոիսական գործերի վրայ և հերքել  
քարդած մեղադրանքը։ Բացատրելով երկու կողմերի կոնկրետա-  
տով ընդունած պարտաւորութիւնների էութիւնը, Պապն ապա-  
ցուցանում է, որ ոչ թէ եկեղեցին, որը մեշտ պահպանել է դաշ-